



# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՐՈՐԴ ԹԻՒՆ՝

ՈՒՐՔԱԹ,  
19 ԴԵԿՏԵՄԲԵՐ  
2003

«ԱՂԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ

ԹԻՒՆ 8 (20)

ՆՈՅԵՄԲԵՐ 2003

bezdlg\_mezdlg@hotmail.com

## ԻՐԱԽՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Սթեֆանի կարապետեան, (3 տարեկան)

Ճիշդ է, մենք տարիքով տակալին փոքր ենք: Սակայն, մեճերու նման ունինք պարտականութիւններ եւ իրաւունքներ, որոնք աշխարհի տարածքին ճանօթ են «մանուկներու իրաւունքներ» անունով:

Մեկի համար շատ սովորական է, սակայն պէտք է գիտնանք, որ անուն եւ մականուն ունենալը, ինչպէս նաեւ ազգի մը պատկանիլը մեր հիմնական իրաւունքներն են: Երբ կրկուս եմք ասոնցմէ, պէտք է անպայման պահանջենք: Մեր իրաւունքն է նաեւ ճտողքի եւ ընկերութեան կողմէ սիրուիլն ու գուրգուրանքի արժանանալը: Առողջ մթնոլորտի մէջ եւ սննդարար ուտելիքով աճիլն ալ պէտք չէ մոռնանք:

Մեր կողմէ «դպրոց յաճախելն ու շրջանաւարտ ըլլալը» յաճախ պարտականութիւն նկատուած է, մինչդեռ ան մեր իրաւունքն է: Եթէ մեր ճտողքը մեկ դպրոց չզրկէ, մենք պէտք չէ ուրախանանք, այլ պէտք է դպրոց յաճախելու մեր իրաւունքին տէր կանգնինք:

Մեր պարտականութիւններուն մասին պիտի չխօսիմ, որովհետեւ ամէն օր կանոնք կը լսենք: Ուրեմն փորձենք կանոնք գործադրել...



### ԱՆՍԻՄԱԼ ԳՐԵՆՔ



Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՛ «Պլտիկ - Մպտիկ»ի հայերէն ուղղագրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:
- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Նոյեմբերէն 2 Դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիւին. Երկուշաբթին Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:
- Մրցումը տեղի կ'ունենայ կիրակի, 7 Դեկտեմբերին, Մեսրոպեան վարժարանի սրահին մէջ. կէսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:
- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:
- Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազգակ»ին:



ԲԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԳՐԱԽԱՆՈՒԹ. «Ճաղկոյեան» կեդրոն. հեռ.՝ 01-241263/4

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



ملحق از تاك



ԱՅՈՒՄՑԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 20. Մանուկներու Միջազգային Օր

## ԵՐԵՒԱՆԵՐԸ ՈՒՆԻՆ ԻՐԵՆՅ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ

Նոյեմբերի ընթացքին աշխարհի կանաչան երկիրներու մէջ տեղի կ'ունենան մանուկներու նուիրուած բազմաթիւ ձեռնարկներ: Անոնք կը տօնեն երեխաներու իրաւունքներու մշակման 14րդ տարեդարձը:

1989ի Նոյեմբեր 20ին տարբեր պետութիւններ որոշեցին մանուկներու իրաւունքներու մասին օրէնքներ: Այս օրէնքները տարիներու ընթացքին ընդունուեցան 192 երկիրներու կողմէ, բացի Միացեալ Նահանգներէն եւ Սոմալիէն:

Կարելոր է գիտնալ սակայն, որ հակառակ եղած աշխատանքներուն, տակաւին կան երկիրներ, որոնք մանուկներու իրաւունքները չեն յարգեր: Կան նաեւ այս պատճառով տառապող մեծ թիւով երեխաներ:

Ներկայիս աշխարհի տարածքին կան շուրջ 200 հազար «պինուոր» երեխաներ, որոնք պատերազմներու կը մասնակցին: Կան նաեւ գրել-կարդալ չգիտցող 150 միլիոն երեխայ եւ ճանր պայմաններու մէջ աշխատող 240 միլիոն երեխայ: Տարեկան 4 միլիոն երեխայ կը մահանայ հիւանդութենէ, անօթութենէ եւ ան-

պատուար վիճակէ, 600 հազար երեխայ կ'ապրի վատառողջ պայմաններու մէջ, միլիոնաւորներ բաւարար սնունդ չեն ստանար, իսկ մեծ թիւով երեխաներ բռնի կերպով բաժնուած են իրենց ճողոններէն:


### ՍՆՈՒՆԴԷՆ ՄԻՆՉԵՒ 3ԱՐԳԱՆՔ...

Մանուկներու իրաւունքներու ամբողջութիւնը կը բաղկանայ 54 բաժիններէ: Թէեւ դժուար է այս էջին մէջ տեղ տալ բոլոր բաժիններուն, սակայն կ'արժէ գաղափար մը ունենալ անոնց մասին:

Այսպէս, մանուկները իրաւունք ունին իրենց ճնաճ օրէն ունենալու անուն, մակա-նուն, քաղաքացիութիւն եւ ընտանիք:

Մանուկները ունին նաեւ՝ լաւ սնունդի, ուսման, առողջ եւ ապահով պայմաններու (մաքուր օդ, ջուր, դեղ...), ապաստօրէն մտածելու եւ արտայայտուելու իրաւունքները:

Մտային եւ ֆիզիքական անդամաւորութիւն ունեցող մանուկները պէտք է վայելեն միւս երեխաներուն իրաւունքները: Պէտք է օգնենք, որ անոնք դառնան ինքնավար, պահեն իրենց արժանապատուութիւնը եւ մասնակցին հաւաքական կեանքի:



## ԼԻՔԱՆԱՆՑԻ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ

1990էն սկսեալ Լիբանան դանդաղ քայլերով սկսաւ գործադրել երեխաներու իրաւունքներու մասին ՄԱԿի օրէնքները: Ներկայիս կարելոր աշխատանք կը տարուի բարելաւելու երեխաներուն վիճակը:

Լիբանանի մէջ առաջին կարգի վրայ կու

գան մանուկներ որդեգրելու հարցը, մանուկներու աշխատանքին եւ անոնց դէմ օգտագործուած բռնութիւններու դէմ պայքարը, մանուկներու ձերբակալման եւ դատական հարցերը, ինչպէս նաեւ՝ խօսքի եւ ապատուութեան պաշտպանութիւնը:

## ԳՈՏԵՐՐ, ԽԵ...

- Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը (ՄԱԿ) միջազգային կազմակերպութիւն մըն է, որ հիմնուած է 1945ին, համաշխարհային Բ. պատերազմէն ետք: ՄԱԿի նպատակն է ապահովել աշխարհի խաղաղութիւնը եւ երկիրներուն միջեւ գործակցութիւն ստեղծել: ՄԱԿի կեդրոնը կը գտնուի Նիւ Եորք:

- ԵՈՒՆԻՍԵՖ ՄԱԿի մանուկներու ֆոնտն է: Անոր նպատակն է պաշտպանել մանուկներուն իրաւունքները եւ ապահովել անոնց կարիքները, մանաւանդ՝ աղքատ երկիրներու եւ նոր պարգայող երկիրներու մէջ:

- Երեխաներու իրաւունքներու ոտնակոխման հարցը միայն աղքատ երկիրներու մէջ չէ, որ տեղի կ'ունենայ, այլ՝ Եւրոպայի եւ Ամերիկայի հարուստ երկիրներուն մէջ եւս:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՃՄԱՐԻՑ ՄԸ

Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ աշխարհի բնակչութեան կէսը 25 տարեկանէն վար է: Ուրեմն աշխարհի բնակչութիւնը բաւական երիտասարդ է: Սակայն պէտք է գիտնալ, որ 20 պատանիէն 17ը կ'ապրի շատ աղքատ պայմաններու մէջ: Ամէնէն կարելոր հարցը կը մնայ, թէ ինչպէս պէտք է բարելաւել աշխարհի բնակչութեան կարգացումը եւ առողջութիւնը:



ԱՅՈՒՄՈՒՆ

# ՄԱՅՐՈՒՆԵՐՈՒ ԵՐԿՐԻՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ




Լիբանանը այն երկիրներն է, որ ընդունեց իր հայրենիքէն դուրս դրուած հայ ժողովուրդը: Ան դարձաւ հայերուն երկրորդ հայրենիքներէն մէկը:

Նոյեմբեր 22ին Լիբանան կը տօնէ իր անկախութեան վաթսունամեակը: Մինչեւ վաթսուն տարի առաջ Լիբանան ենթակայ եղած է այլ ժողովուրդներու իշխանութեան: Մինչեւ 1920 թուականը ան եղած թուրքերու լուծին տակ, իսկ անկէ ետք ֆրանսացիները իրենց գերիշխանութեան տակ առած են երկիրը:

1943ի Նոյեմբերին, սակայն, Լիբանանի քաղաքական եւ մտաւորական դէմքերը զօրաւոր կերպով ըմբոստացան օտար իշխանութեան դէմ: Անոնք կազմակերպեցին յեղափոխութիւն մը եւ ամբողջութեամբ իրենք ստանձնեցին երկիրն իշխանութիւնը:

Այսպիսով, Լիբանան դարձաւ անկախ հանրապետութիւն: Ան ունի իր սեփական դրօշակը, որուն վրայ կայ անոր խորհրդանիշը եղող մայրիկ ճառք: Ունի նաեւ իր քայլերգը, բանակը եւ իշխանութիւնները:


## ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



- 8-16 Նոյեմբերին Միացեալ Նահանգներու հիւսթըն քաղաքին մէջ տեղի ունեցաւ թենիսի «Մասթըրս» մրցաշարքը, որուն մասնակցեցան աշխարհի լաւագոյն ութ թենիսմէները: Մրցումին աւարտականին հասան ճազումով հայ ամերիկացի Անտրէ Ակասի եւ չուիցերիացի Ռոժէ Ֆետերէր: Ախոյեան հանդիսացաւ Ռոժէ Ֆետերէր:

- Ֆորմիւլա 1ի չորս անգամ ախոյեան ճազումով հայ ֆրանսացի Ալէն Փրոսթ տասը տարի դադար առնելէ ետք որոշած է վերադառնալ ինքնաշարժի մրցումներուն: Ան այս անգամ պիտի թշէ իրեն համար պատրաստուած Քորոլլա Թոյոթա ինքնաշարժ մը, սակայն այս անգամ... սառոյց վրայ:

## ԻՍԼԱՄՆԵՐԸ ԿՐ ՏՕՆԵՆ ՌԱՄԱՏԱՆԸ



610 թուականի երկրորդ ամսուն Մոհամմէտ մարգարէի կը յայտնուի Աստուծոյ սուրբ խօսքը: Իսլամներուն Ռամատան ամիսը կը տօնէ այս յայտնութիւնը:

Աստուծոյ այս պատգամը գրի առնուած է իսլամներու սրբական գիրքին՝ Քուրանին մէջ: Ան իսլամներէն կը պահանջէ, որ

անոնք ճոմ պահեն այդ ամսուան ընթացքին, արեւածագէն մինչեւ արեւմար: Եւ որովհետեւ իսլամական օրացոյցը կը հետեւի լուսնի օրացոյցին, Ռամատանին սկիզբն ու աւարտը կը տարբերին տարուան եւ վայրին համաձայն:

Ծոմին առաջին օրը կ'որոշուի, երբ երեւի լուսնին նոր մահիկը: Յաջորդ օրը կը սկսի սուրբ ամիսը:

Այս տարի Լիբանանի մէջ Ռամատանը սկսաւ 27 հոկտեմբերին եւ հաւանաբար շարունակուի մինչեւ 26 Նոյեմբեր: Անոր կը յաջորդէ Ֆիթրի տօնը:

### ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՐՕՆԻ ՍԻՒՆԵՐԸ

Ռամատանը մաս կը կազմէ իսլամական կրօնի գլխաւոր հինգ սիւներուն, զորս իսլամները պէտք է յարգեն եւ հետեւին: Միւս չորս կէտերն են.

- հաւատալ, թէ Աստուած մէկ է եւ Մոհամմէտ՝ անոր մարգարէն:
- Օրուան ընթացքին հինգ անգամ աղօթել:
- Պահած դրամէն պզտիկ բաժին մը աղքատներուն յատկացնել:
- Առնուալն մէկ անգամ ուխտագնացութեան երթալ Սէուտական Արաբիոյ Մեքքէ քաղաքը, ուր ճնած է Մոհամմէտ:



ՊՅՈՒՄԵՆ


# «ՎՈՅՐԾՐՐ»Ի ԱՆՌԱԽԱՏԱԼԻ ՃԱՄԲՈՐՊՈՒԹԻՒՆԸ

1977ին արձակուած «Վոյրծրր» անջրպետանաւոր հասած է մեր արեգակնային դրութեան սահմանները: Ան երկրագունդէն հեռացած է 12 միլիառ քմ.: «Վոյրծրր» երկրագունդէն ամէնէն հեռու գտնուող առարկան է, որ շինուած է մարդուն կողմէ:

26 տարի շարունակ մեր արեգակնային դրութեան բոլոր մոլորակներուն մօտէն անցնելէ ետք, «Վոյրծրր» հասած է շրջան մը, ուր արեւուն ազդեցութիւնը կը վերջանայ, եւ ուր կը տիրէ սառցային ցուրտ մը:

Գիտնականները վստահ են, որ «Վոյրծրր» հասած է էլիփոպ կոչուող այս շրջանը, որովհետեւ ան վեց ամիսէ ի վեր սկսած է դրկել ցնցումի ձեւով տեղեկութիւններ: Գիտնականները գիտեն, որ այդ շրջանին մէջ արեւուն կողմէ արձակուած մանր նիւթերը կը հանդիպին մեր արեգակնային դրութենէն դուրս գտնուող այլ նիւթերու հետ եւ կը յառաջացնեն «Վոյրծրր»ի դրկած տեղեկութիւններուն նման ցնցումներ:

«Վոյրծրր» պիտի շարունակէ տեղեկութիւններ դրկել մինչեւ 2020 թուականը, երբ պիտի վերջանայ իր ուժանիւթը:



Սակայն ան իր ճամբորդութիւնը պիտի շարունակէ եւ 296000 լոյսիտարիէն պիտի այցելէ մեր երկինքի ամէնէն փայլուն աստղին՝ Սայրուսի:

## ԱՃՊԱՐՈՒԻ ԱՄԵՆԵՆ ԲԱՐՁՐ ՇՆՆՈՒԹԻՒՆԸ



Թայուանի «Թէյպէ 101» գրասենեակներու շէնքը իր 508 մեթր բարձրութեամբ դարձաւ աշխարհի ամէնէն բարձր շինութիւնը: 101 յարկ ունեցող այս շէնքը պիտի օժտուի նաեւ աշխարհի ամէնէն արագ վերելակներով: Կարելի պիտի ըլլայ մինչեւ 90րդ յարկը բարձրանալ... 39 երկվայրկեանէն:

## ԱՐԵՂԱՎՆԱՅԻՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

Բոկտեմբերի վերջը արեւը ունեցած է մեկի ճանօթ իր երրորդ ամէնէն մեծ ժայթքումը: Կրակի հսկայական փոթորիկի նմանող այս ժայթքումին տեղը արեւուն երկրագունդին նայող կողմին կեդրոնն է: Արեւուն կապերուն այս պայթումէն յառաջացած են երկրագունդէն 13 անգամ աւելի մեծ կրակէ եւ կապերէ ամպ մը եւ ելեկտրականութեամբ լեցուած փոթորիկ մը: Սովորականէն հինգ անգամ աւելի զօրաւոր արեգակնային փոթորիկին պատճառով այս ամպը երկիր հասած է 19 ժամէն: Գիտնականները կը վախնային, որ այս փոթորիկը մեծ վնասներ պատճառէ երկրին: Բարեբախտաբար ելեկտրական այս ամպը շատ մեծ վնասներ չպատճառեց երկրին վրայ:

## ԱՄԵՆԵՆ ՄԵԾ ԱՍՏՊԱԿՈՅԼԸ

Աստղահոյլերը միլիոնաւոր աստղերու, կապերու եւ փոշիներու շատ մեծ խումբեր են: Մեծ թիւով աստղեր, ամէն անգամ որ խմբուին, տարբեր ձեւեր կը ստանան: Մեր աստղահոյլը՝ Ծիր կաթինը, կը նմանի տափակ եւ ոլորուած ափսէի մը, որուն կեդրոնի մասը քիչ մը ուռած է: Ամէն օր մեկ լուսաւորող արեւը վայն կապմող միլիոնաւոր աստղերէն մէկն է: Արեգակնային դրութիւնը շատ մանր բաժին մըն է այս հսկայական աստղահոյլէն: Վերջերս գիտնականները գտած են մինչեւ հիմա իրենց գիտցած բոլոր աստղահոյլերէն շատ աւելի մեծ ու փայլուն աստղահոյլ մը: Անոնք 12 միլիոն լոյսի

տարի հեռու գտնուող այս աստղահոյլը կոչւած են «Լուսանի կամար»: Ըստ գիտնականներուն հաշիւներուն, «Լուսանի կամար»ին մէջ գոյութիւն ունին միայն... մէկ միլիոն աստղեր: Սակայն անոր տաքութիւնը երկու անգամ աւելի զօրաւոր է քան Ծիր կաթինինը:






ԿԵՆՏՐՈՆ

## ՃԱՐՊԻԿ ԲՏՊԻՏ ՋՈՒԿԸ

Խաղաղական եւ հնդկացի ովկիանոսներուն կապոյտ ջուրերուն մէջ անմիջապէս կարելի է վայն նշմարել: Ան ջուրին մէջ կը յառաջանայ քիչ մը անճարակ ձուկով, կարծէք իսկապէս լողալ չէ սորված... Եւ հաւանաբար անոր անունը եկած է այս երեւոյթէն: Իսկ ձուկի ճանճթ է հտպիտ ձուկը:



Ծովային աշխարհը անգութ միջավայր մըն է եւ հտպիտ ձուկին վառ գոյները մեծ ծուկերուն ախորժակը կը բանան: Բետեւաբար հտպիտ ձուկը համաձայնութիւն մը կնքած է շատ յարգի հարսնուկին հետ: Ծովամայրին նման հարսնուկն ալ ունի շատ ձկուն շօշափուկներ, որոնք ճաճկուած են անշարժացնող թոյն մը պարունակող մանր ասեղներով: Երբ հտպիտ ձուկը վտանգի մէջ ըլլայ, անմիջապէս կը պահուրտի հարսնուկին մէջ: Բարսնուկը կ'ուտէ իր շօշափուկներուն մէջ բռնուած յարձակող ձուկը, իսկ

հտպիտն ալ կը վերջացնէ մնացորդները:

Սակայն ինչո՞ւ միւս ձուկերուն նման հտպիտ ձուկն ալ չ'անշարժանար հարսնուկին թոյնէն. որովհետեւ ան փոքր եղած ատեն կը քսուի հարսնուկի ոտքին՝ իր մարմինը ճաճկելով թոյնէն պաշտպանող կպչուն նիւթով մը: Բետեւաբար ան հարսնուկին համար անկոչ հիւր մը չէ, այլ՝ հարազատ մը:

## ԱՍՏՂԵՐՈՒ ԱԾՈԱՐԲԷՆ

★Ճաքիրա ԵՈՒՆԻՍԵՖԻ կողմէ նշանակուեցաւ բարի կամեցողութեան դեսպան: Լիբանանեան ճագում ունեցող 26 տարեկան քոլումպիացի երգչուհին այս տիտղոսին տիրացող ամէնէն երիտասարդ անձն է:

★Սկովտիոյ մայրաքաղաք Էտինպուրկի մէջ տեղի ունեցաւ Էմ. Թի. Վի.ի «Եուրոփ Միւլիք Ընտրուպ»ի 10րդ մրցանակաբաշխութիւնը: Մեծագոյն յաղթականը եղաւ Ճասթին Թիմպրլէյթ, որ տիրացաւ երեք մրցանակի: Իսկ տարուան լաւագոյն երգի մրցանակը տրուեցաւ Պիոնսէի:

★Աշխարհահռչակ թենոր Լուչիանօ Փաւարոթթի, յարգելով 2005 թուականին բեմերէն վերջնականապէս հեռանալու իր որոշումը, արդէն իսկ սկսած է իր վերջին երգահանդեսներուն: Առաջին հանգրուանին ան ելոյթ ունեցաւ Միացեալ Նահանգներու եւ Մեքսիքոյի մէջ, ուր քառասուն հազար ունկնդիրներ եկած էին վերջին անգամ մտիկ ընելու «Պիկ Լուչիանօ»ն:



ՍԿՏՈՒՐՈՒՆ

## «ՖԱՅՆՏԻՆԿ ՆԻՄՕ»

Փոքրիկ հտպիտ ձուկ մը՝ Նիմօ, դպրոցական իր առաջին օրուան ընթացքին կ'ապրի մեծ արկածախնդրութիւն մը: Ան կ'որսացուի սուկորդի մը կողմէ եւ կը տարուի ատամնաբուծի մը ձկնարանը: Միւս կողմէ, Նիմոյի հայրը կը սկսի իր միակ վաւակը փնտռելու աշխատանքի մը: Մինչ հայրը իր նոր եւ տարօրինակ ընկերոջ հետ կը փորձէ ովկիանոսին մէկ ճայրէն միւսը անցնիլ եւ գտնել իր վաւակը, Նիմօ, ձկնարանի իր նոր ընկերներուն հետ կը մտածէ իր բանտէն ազատելու մասին՝ փոքրիկի մը խաղալիքը դառնալէ առաջ:

«Ֆայնտինկ Նիմօ» կը նկատուի վերջին տարիներու մանուկներու յատուկ լաւագոյն կենդանի գծանկարներէն մէկը: Ժապաւէնը անպայմանօրէն հաճելի եւ օգտական ժամանց մը պիտի ըլլայ փոքրիկ հանդիսատեսներուն համար:





ԳՆՆՈՐ

**ԻՆՉ ԿՐ ԱՏԱԾԵՆ**

10-15 բառով կարճիքդ տո՛ւր

հետեւեալ նիւթին մասին:

Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ»-ի

խմբագրատուն մինչեւ հինգշաբթի.

11 դեկտեմբեր 2003:

**Ինչպէս կրնաս օգնել իր ուսանելու իրաւունքին զրկուած մանուկին**

Նախորդ հարցումին կարճիքները

• Եթէ շաբաթ մը առանց հեռա-տեսիլի մնայի, նախ կը նեղանայի, որովհետեւ տարիներով վարժուած եմ: Բայց յետոյ կարծեմ կը համոզուիմ եւ ժամանակս կ'անցընեմ գիրք կարդալով եւ ընտանիքիս հետ զրուցելով:

Գաթրին Յակոբեան

• Երբ առանց հեռատեսիլի մնամ, կը ծանձրանամ: Բամակարգիչով կը խաղամ կամ իմ բարեկամներու քով կ'երթամ եւ իրենց տունը հեռատեսիլ կը դիտեմ:

Էլի Պիրթար

• Եթէ շաբաթ մը առանց հեռա-տեսիլի մնայի երբեք նեղութիւն պիտի չզգայի, որովհետեւ արդէն իսկ մայրս չարտօներ, որ երկար ժամանակ հեռատեսիլ դիտեմ: Ատոր փոխարէն համակարգիչէն տեղեկութիւններ կը քաղեի:

Ալէնտի Եագուպեան

Ժամանցին պատասխանները լոյս

պիտի տեսնեն «Ազդակ»-ի

Շաբաթ, 22 նոյեմբեր 2003ի թիւին

մանկապատանեկան էջին մէջ:

**ԻՆՉԱՐԱՆ ԹԻՒ 19Ի ԾԱԲՈՂԸ**

Բարցարան թիւ 19ի շահողը՝


Խաժակ Թապագեան

(Յ տարեկան)


Չահեցաւ անցեալ ամսուան մրցումը:

Ան իր նուէրը կրնայ ստանալ

«Ազդակ»էն, «Ճաղկոյեան» կեդրոն:





1. 1-27 կէտերը իրարու միացուր գտնելու համար պահուած պատկերը:



2. Որո՞նք հետ կը խօսի Պլտիկ-Մպտիկ:



3. Կրնաս գտնել այս տղուն շուքը



4. Կրնաս գտնել անբնական մանրամասնութիւնները

5. Քանի տարբերութիւն կը տեսնես երկու պատկերներուն միջեւ:

**ԻՆՉԱՐԱՆ ԹԻՒ 20**

1.- Նշէ՛ երեք օրինակ մանուկներու իրաւունքներէն: \_\_\_\_\_

2.- Ո՞ր թուականին Լիբանան անկախացաւ: \_\_\_\_\_

3.- Ծովային Իր անասունին հետ կը բարեկամանայ հոպիտ ձուկը: \_\_\_\_\_

Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»-ի


խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

Անուն – Մականուն \_\_\_\_\_

Վարժարան \_\_\_\_\_

Ծննդեան թուական \_\_\_\_\_

Ինքնաձայնի թիւ \_\_\_\_\_



ՔՐՈՒՍՄԻ

# ԱՐԿԱՃԱԽՆԴՐԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ ՆՈՐ ԱՃՈՒՐՆԵՐԸ

Մանուկները թե՛ աւելի մեծերը հետաքրքրող հեքիաթներուն կողքին, գիրքերու աշխարհը իր փոքրիկ ընթերցողներուն կու տայ նաեւ այլ տեսակի հաճոյք մը՝ արկածախնդրական պատմութիւնները:

Արկածախնդրական պատմութիւններն ու վէպերը ունին շատ հետաքրքրական նիւթեր, որոնց մէջ միշտ կան անակնկալներ ու դժուարութիւններ: Անոնց հերոսները կ'ըլլան քաջ, վօրատր եւ պատրաստ՝ յաղթելու դժուարութիւններուն կամ արգելքներուն: Արկածախնդրական գիրքերուն մէջ կարելոր է նոր աշխարհներ եւ վայրեր գտնելը: հերոսները առանձին կամ փոքր խումբով կը ծանօթանան այս նոր աշխարհներուն, կը վարժուին անոնց նորութիւններուն եւ ամէնէն կարելորդ՝ կը փորձեն ապրելու լաւ պայմաններ գտնել իրենց տուններէն շատ տարբեր եղող այս վայրերուն մէջ:



րոսները կ'ուղղուին անձանօթ երկիրներ՝ գտնելու համար գանձեր, տեղեկութիւններ եւ կամ կատարելու համար այնպիսի քաջութիւններ, զորս ոչ մէկը կատարած է:

Թերեւս ձեզի ծանօթ են Ռոպինսոն Թրուպոյի արկածները, կամ ճովուն խորերը սուլանաւի մէջ ապրող եւ բնաւ ցամաք ոտք չկոխող տարօրինակ հերոսին մասին պատմող «Քսան հապար կանգուն ովկիանոսին խորերը» գիրքը: Արկածախնդրական այս պատմութիւնները, ինչպէս շատ ուրիշներ, վերածուած են նաեւ հետաքրքրական ժպատներու:

Մենք եւս ունինք արկածախնդրական գեղեցիկ պատմութիւններ եւ վէպեր, որոնք կը կարդացուին մէկ շունչով:

Ահաւասիկ ձեզի կու տանք փոքր բաժին մը վախթանգ Անանեանի «Յովպազանի գերիները» արկածախնդրական վէպէն:

Արկածախնդրական պատմութիւններուն մէջ յաճախ հե-

## ԹԵ՛ ՌՎ ԲՆԱԿԵՐ ԷՐ ԽՈՐՐՈՒՊԱԽՈՐ ԱՆՁԱԽԻՆ ՄԷՋ

Երբ բոլոր չղջիկներն ալ գետին թափեր էին, Աշոտ յայտարարեց.

- Բիմա կրնանք հոս տեղափոխուիլ: Դէ՛հ, դուռը բանանք եւ տեսնենք մեր նոր բնակարանը:

Դուռը կրունկին վրայ բացին, ծերմակ ծիւնին ցոլացող լոյսը ներս խուժեց եւ մեր պատանիներուն դիմաց բացուեցաւ ոչ մեծ անձաւ մը, խորտուբորտ պատերով եւ գմբէթածեւ բարձր առաստաղով: Պատին տակ, կաւէ խուփը վրան՝ կճուճ մը կար կանգնած՝ որ յատակին նման, պատուած էր թռչնաղբի հաստ շերտով մը: Կճուճին քով փայտէ կոթ մը կ'երեւէր: Գազիկ վեր առաւ վայն եւ ուրախութեամբ գոռաց.

- Կացի՛ն, ձեր արե՛րը, կացի՛ն գտեր եմ...

Կացի՛ն... Ատիկա՛ ահա փրկութիւն էր, քանի որ, տղայ համար՝ մինչեւ այդ պահը, ամէնէն տանջալի գործը՝ ձեռքերով փայտ ջարդելն էր:

Մեր պատանիները հետաքրքրութենէն կ'այրէին: Քարայրին անկիւնները մտած՝ կը ճռէին, կը վերցնէին ամէն իր, կը շօշափէին պատերը, կը խուզարկէին բոլոր անցքերն ու անկիւնները՝ գանձ փնտռողի ազահութեամբ:

Ահա՛, Աշոտ պատի մը տակէն երկաթէ անձուռնի գործիք մը դուրս քաջեց եւ դէպի լոյսը տանելով՝ ծչաց ուրախութենէն.

- Թակա՛րդ, գայլի թակա՛րդ... Բայց չէ՛, ասիկա գայլի չէ, աւելի՛ մեծ գազանի է...

- Ասով ես կը բռնեմ այդ գազանը, - ոգետրուեցաւ Աշոտ: - Վա՛հ, ասիկա արդէն ծիշդ ու ծիշդ յովապի թակարդ է, - գոչեց ան, գործիքը լաւ վննելով: - Արդէն գայլ չի մտներ այս ծորը, ես ալ կը մտածէի, թէ ինչի համար է այս թակարդը: Այս թակարդին տէրը յովազներ որսացեր է...

- Ի՛հ, ասիկա ինչ է, որ ոգետրուեր ես, կեցի՛ր տեսնեմ կճու-

ծին մէջ ինչ կայ:

Եւ կճուճը շրջելով, Ծուշիկ անոր յատակէն քանի մը բուռ բովաւած հատիկ հանեց:

Յորեն... ասիկա անօթութենէն կը փրկէր - եթէ գտնէին այդ հատիկները տուող «վայի արտը»:

Չորս Ծաբաթ էր, որ իրենց բերանը հաց չէին դրած, ուստի, այդ նիհար հատիկներուն նայելու ատեն՝ իրենց բերանը ջուր կը լեցուէր...

- Բաժնե՛լ եւ անմիջապէ՛ս աղալ, - առաջարկեց Գազիկ՝ անհամբեր:

- Ինչո՞վ աղալ:

- Ակռաներով...

Աղանձը շատ համեղ թուեցաւ:

Երբ խուզարկեցին անձաւը, գտան ու ազահութեամբ վննեցին անոր նախկին տիրոջ ամբողջ ունեցածը:

Բայց ո՞վ եղեր էր այդ անձաւին բնակիչը, ինչու ապատ աշխարհը ձգեր, եկեր էր կամովին բանտարկուեր էր այդ ահալի ծորին մէջ՝ մարդոցմէ կտրուած:

Կը մտածէին մեր պատանիները, բայց ո՛չ մէկ երակացութեան կը յանգէին, մինչեւ որ Գազիկին սուր աչքը այրին խորքը բան մը նկատեց, որմէ պարկուեցաւ, թէ ո՞վ եղեր էր հոն բնակող խորհրդրուար մարդը: Ժայռի պատի բնական դարակին վրայ հնամաջ եւ ճուխէն սեւցած պղտիկ գիրք մը կար: Դարակին վրայ, պատն ի վեր փոքր խաչքար մը կանգնէր էր, իսկ վարը, յատակին վրայ մանր ու փափուկ աւալ ցանուեր էր, որուն վրայ նշմարելի էր երկու ճունկի հետք...

- Ճգնաւոր է եղեր, - որոշեց Աշոտ: - Տեսէ՛ք, ճնրադրեր է աւալին վրայ, ժամագիրք կարդացեր է եւ ճունկի եկեր՝ խաչքարին առջեւ...



ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՄԻՋ -

## ՓՈՔՐՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

Սիրելի «Պպտիկ-Մպտիկ»,  
Ճատ ուրախ եղայ, երբ մենք՝ փոքրերս ալ ունեցանք մեր յատուկ  
մանկապատանեկան ամսաթերթը: Զայն կարդալով կրնանք նոր լուրեր ունենալ  
աշխարհէն: Նոյնպէս կրնանք մեր մասնակցութիւնը բերել թէ՛ գճագրութիւններով  
ու գրութիւններով:

Լիլիթ Նալպանտեան  
9 տարեկան, Խրիփոլիէն



## ԼԻՐԱՆԱՆ

Երկրորդ հայրենիքս Լիբանան,  
Կարճես դրախտ մըն է ան.  
Կը նայիմ ամէն տեղ,  
Կը տեսնեմ ճառ ու ճաղիկներ:

Ամէն եղանակի բնութեամբ,  
Բարուստ է գեղեցկութեամբ,  
Ամրան՝ իր հրաշալի ճովեցերթով,  
Ձմրան՝ իր սպիտակ ձիւնով:

Բպարտ ես մայրի ճառով,  
Պատմութիւններու մէջ յիշուած,  
Կ'աղօթենք, որ միշտ կանգուն  
Ու կանաչ մնաս:

Պարոյր Աճէմեան  
12 տարեկան

## ԱՃՈՒՆ

Աշո՛ւն,  
Այդ գեղեցիկ ոսկի տերեւների  
Ուրկէ՛ կու գան:

Աշո՛ւն,  
Այդ կաթիլ-կաթիլ մեղմ անձրեւների  
Ուրկէ՛ կու գան:

Աշո՛ւն,  
Այդ կէս ամպոտ, կէս արեւոտ օրերի  
Ուրկէ՛ կու գան:

Աշո՛ւն,  
Դուն եւ այդ գեղեցկութիւնդ  
Ուրկէ՛ կու գար:

Արայ Կիտանեան  
11 տարեկան



Ձեր գրութիւնները կամ նամակները  
կրնաք ուղարկել՝  
[bezdig\\_mezdig@hotmail.com](mailto:bezdig_mezdig@hotmail.com)  
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի  
խմբագրութեան, «ԱՋՊԱԿ»  
«Ճաղպոյեան» կեդրոն